ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք.

# ԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

## (ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ)

342
Ա-21

ԱԶՊԱՐՏՆԵՇՐ ԲԱԳՈՒ 1937

01 MAR 2010
05 FEB 2007

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք։

342
Ա-21

# ԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ (ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԻ) ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Խորհուրդների Համադրբեջանյան արտակարգ 9-րդ համագումարի վորոշումը

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ 9-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՎՈՐՈՇՈՒՄ Է․

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ (ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԻ) ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

# ԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Խորհուրդների Համադրբեջանյան արտակարգ 9-րդ համագումարի վորոշումը

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ 9-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՎՈՐՈՇՈՒՄ Ե.

ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼ ՀԱՄԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԽՍՀ-Ի ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՄՇԱԿԵԼ ՅԵՎ ՀԱՍՏԱՏԵԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՆՈՒՅՆՊԵՍ ՅԵՎ ՍԱՀՄԱՆԵԼ ԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

01. 2013

# ԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ)

1010
42489

34.445

ԳԼՈՒԽ I

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

*ՀՈԴՎԱԾ 1. Ադրբեջանյան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը բանվորների ու գյուղացիների սոցիալիստական պետություն է:*

*ՀՈԴՎԱԾ 2. Ադրբեջանյան ԽՍՀ-ի քաղաքական հիմքն են կազմում աշխատավորների պատգամավորների Խորհուրդները, որոնք աճել ու ամրապնդվել են կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը տապալելու, պրոլետարիատի դիկտատուրան նվաճելու, ադրբեջանյան ժողովրդին ցարիզմի ու ռուսական իմպերիալիստական բուրժուազիայի ազգային ճնշումից ազատագրելու և ազգայնական հակահեղափոխությունը ջախջախելու հետևանքով:*

*ՀՈԴՎԱԾ 3. Ամբողջ իշխանությունն Ադրբեջանյան ԽՍՀ-ում պատկանում է քաղաքի ու գյուղի աշխատավորներին՝ հանձինս աշխատավորների պատգամավորների Խորհուրդների:*

*ՀՈԴՎԱԾ 4. Ադրբեջանյան ԽՍՀ-ի տնտեսական հիմքն են կազմում տնտեսության սոցիալիստական սիստեմը և արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը, որոնք հաստատվել են տնտեսության կապիտալիստական սիստեմի լիկվիդացիայի, արտադրության գործիքների ու*

միջոցների մասնավոր սեփականության վերացման և մարդու կողմից մարդու շահագործումը վոչնչացնելու հետևանքով:

ՀՈԴՎԱԾ 5. Սոցիալիստական սեփականությունն Ադրբեջանական ԽՍՀ-ում ունի կա՛մ պետական սեփականության ձև (համաժողովրդական ունեցվածք), կա՛մ կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականության ձև (առանձին կոլտնտեսությունների սեփականություն, կոոպերատիվ միավորումների սեփականություն):

ՀՈԴՎԱԾ 6. Հողը, նրա ընդերքը, ջրերը, անտառները, գործարանները, ֆաբրիկները, հանքահորերը, հանքերը, յերկաթուղային, ջրային ու ոդային տրանսպորտը, բանկերը, կապի միջոցները, պետության կազմակերպած խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունները (խորհտնտեսությունները, մեքենա-տրակտորային կայանները և այլն), ինչպես նաև կոմունալ ձեռնարկությունները և բնակարանային հիմնական ֆոնդը քաղաքներում ու արդյունաբերական վայրերում, հանդիսանում են պետական սեփականություն, այսինքն՝ համաժողովրդական ունեցվածք:

ՀՈԴՎԱԾ 7. Կոլտնտեսությունների ու կոոպերատիվ կազմակերպությունների հանրային ձեռնարկությունները իրենց կենդանի ու մեռյալ ինվենտարով, կոլտնտեսությունների և կոոպերատիվ կազմակերպությունների կողմից արտադրվող արտադրանքը, ինչպես նաև նրանց հանրային շինությունները կազմում են կոլտնտեսությունների ու կոոպերատիվ կազմակերպությունների հանրային, սոցիալիստական սեփականությունը:

Յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսություն, բացի կոլտնտեսային հանրային տնտեսությունից



ստացած հիմնական յեկամտից, անձնական ոգտագործման համար ունի վոչ-մեծ տնամերձ հողամաս և, վորպես անձնական սեփականություն՝ ոժանդակ տնտեսություն տնամերձ հողամասում, բնակելի տուն, մթերատու անասուններ, թռչուններ և գյուղատնտեսական մանր ինվենտար՝ գյուղատնտեսական արտելի կանոնադրության համաձայն:

ՀՈԴՎԱԾ 8. Կոլտնտեսությունների զբաղեցրած հողն ամրացվում է նրանց՝ անվճար և անժամկետ ոգտագործելու համար, այսինքն՝ առհավետ:

ՀՈԴՎԱԾ 9. Տնտեսության սոցիալիստական սիստեմի հետ միասին, վորը հանդիսանում է տնտեսության տիրապետող ձևը Ադրբեջանական ԽՍՀ-ում, որենքով թույլատրվում է մենատնտես գյուղացիների ու տնայնագործների մասնավոր մանր տնտեսություն, վորը հիմնված է անձնական աշխատանքի վրա և բացառում է ուրիշի աշխատանքի շահագործումը:

ՀՈԴՎԱԾ 10. Քաղաքացիների անձնական սեփականության իրավունքը՝ նրանց աշխատանքային յեկամուտների ու խնայողությունների նկատմամբ, բնակելի տան և տնային ոժանդակ տնտեսության նկատմամբ, տնային տնտեսության և առօրյա գործածության առարկաների նկատմամբ, անձնական սպառման ու հարմարության առարկաների նկատմամբ, ինչպես և քաղաքացիների անձնական սեփականության ժառանգման իրավունքը—պահպանվում են որենքով:

ՀՈԴՎԱԾ 11. Ադրբեջանական ԽՍՀ-ի տնտեսական կյանքը վորոշվում և ուղղություն է ստանում պետական ժողովրդատնտեսական պլանով՝ հոգուտ հանրային հարստության ավելացման, աշխատավորների նյութական ու կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացման, սոցիալիստական պետության անկա-

խության ամրացման և նրա պաշտպանունակության ուժեղացման։

ՀՈԴՎԱԾ 12․ Ադրբեջանյան ԽՍՀ-ում աշխատանքը հանդիսանում է աշխատանքի ընդունակ յուրաքանչյուր քաղաքացու պարտականությունը և պատվի գործը՝ «ով չի աշխատում, նա չի ուտում» սկզբունքի համաձայն։

Ադրբեջանյան ԽՍՀ-ում իրականացվում է սոցիալիզմի սկզբունքը՝ «յուրաքանչյուրից ըստ նրա ընդունակության, յուրաքանչյուրին՝ ըստ նրա աշխատանքի»։

## ԳԼՈՒԽ II

# ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀՈԴՎԱԾ 13․ Տնտեսական և քաղաքական, հավասարապես և պաշտպանության գծով փոխադարձ օգնությունն իրագործելու նպատակով Ադրբեջանյան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը կամավոր կերպով միացել է իրավահավասար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների՝ Ռուսաստանի ԽՖՍՀ-ի, Ուկրաինական ԽՍՀ-ի, Բելոռուսական ԽՍՀ-ի, Վրացական ԽՍՀ-ի, Հայկական ԽՍՀ-ի, Թուրքմենական ԽՍՀ-ի, Ուզբեկական ԽՍՀ-ի, Տաջիկական ԽՍՀ-ի, Ղազախական ԽՍՀ-ի, Կիրգիզական ԽՍՀ-ի հետ Միութենական պետության — Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ։

Ելնելով դրանից, Ադրբեջանյան ԽՍՀ-ն ապահովում է ԽՍՀ Միությանը՝ համաձայն իշխանության նրա բարձրագույն մարմինների և պետական կառավարման մարմինների՝ այն իրավունքները, վորոնք



վորոշված են ԽՍՀ Միության Սահմանադրության 14-րդ հոդվածով։

ԽՍՀ Միության Սահմանադրության 14-րդ հոդվածի սահմաններից դուրս, Ադրբեջանյան ԽՍՀ-ն իրականացնում է պետական իշխանությունն ինքնուրույն կերպով, լիովին պահպանելով իր սուվերեն իրավունքները։

ՀՈԴՎԱԾ 14․ Ադրբեջանյան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը բաղկացած է Նախիջևանի Ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունից, Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզից, Աղդամի, Աղդաշի, Աղջաբեդու, Ալի-Բայրամլիի, Աստարայի, Աստրախան-Բազարի, Բարդայի, Բելոկանիի, Բելասուվարի, Վարդաշենի, Վերգյադուզի, Գյոգչայի, Հիլի, Դաստաֆյուրի, Ջեբրայիլի, Դիվիչիի, Եվլախի, Զաքաթալայի, Զանգելանի, Զարդոբի, Զուվանդի, Իսմայիլլիի, Ղազախի, Կարադոնլիի, Կարյագինի, Կասում-Իսմայիլովի, Կախի, Գեդաբեկի, Քելբաջարի, Կիրովաբադի, Կոնախքենդի, Կուբաթլիի, Ղուբայի, Կուտկաշենի, Քյուրդամիրի, Լաչինի, Լենքորանի, Մասալլիի, Նարիմանովի, Նուխու, Սաբիր-Աբադի, Սալյանի, Սամուխի, Թաուզի, Թարթառի, Խաչմազի, Խիզիի, Շամխորի, Շահումյանի, Շամախու շրջաններից և Բաքու քաղաքից։

ՀՈԴՎԱԾ 15․ Ադրբեջանյան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն իրեն իրավունք է վերապահում ազատորեն դուրս գալու Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունից։

ՀՈԴՎԱԾ 16․ Ադրբեջանյան ԽՍՀ-ի տերիտորիան չի կարող փոփոխության ենթարկվել առանց Ադրբեջանյան ԽՍՀ-ի համաձայնության։

ՀՈԴՎԱԾ 17. ԽՍՀՄ-ի օրենքները պարտադիր են Ադրբեջանյան ԽՍՀ-ի տերիտորիայում:

ՀՈԴՎԱԾ 18. Ադրբեջանյան ԽՍՀ-ի յուրաքանչյուր քաղաքացի հանդիսանում է ԽՍՀՄ-ի քաղաքացի:

Մյուս բոլոր միութենական հանրապետությունների քաղաքացիներն Ադրբեջանյան ԽՍՀ-ի տերիտորիայում օգտվում են Ադրբեջանյան ԽՍՀ-ի քաղաքացիների հետ միատեսակ իրավունքներով:

ՀՈԴՎԱԾ 19. Ադրբեջանյան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության իրավասությանը, ի դեմս նրա իշխանության բարձրագույն մարմինների և պետական կառավարման մարմինների, յենթակա յեն.

ա) Ադրբեջանյան ԽՍՀ-ի Սահմանադրության սահմանումը և նրա կատարման վերահսկողությունը.

բ) Նախիջևանի ԱԽՍՀ-ի Սահմանադրության հաստատումը.

գ) Ադրբեջանյան ԽՍՀ-ի կազմում նոր ավտոնոմ հանրապետությունների ու մարզերի ստեղծումը ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի հաստատման ներկայացնելը.

դ) Նախիջևանի ԱԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի սահմանների և շրջանային բաժանման հաստատումը.

ե) Ադրբեջանյան ԽՍՀ-ի շրջանային բաժանման և շրջանների սահմանների սահմանումը.

զ) Ադրբեջանյան ԽՍՀ-ի օրենսդրությունը.

է) պետական կարգի ու քաղաքացիների իրավունքների պահպանումը.



թ) Ադրբեջանյան ԽՍՀ-ի ժողովրդատնտեսական պլանի հաստատումը.

ժ) Ադրբեջանյան ԽՍՀ-ի պետական բյուջեյի հաստատումը.

ի) ԽՍՀՄ-ի օրենսդրությանը համապատասխան, պետական ու տեղական հարկերի, գանձումների ու վոչ հարկային յեկամուտների սահմանումը.

լ) Նախիջևանի ԱԽՍՀ-ի ու Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի բյուջեների և շրջանների ու քաղաքների տեղական բյուջեների իրագործման ղեկավարումը.

խ) ապահովագրական և խնայողական գործի ղեկավարումը.

ծ) հանրապետությանը յենթակա բանկերի, արդյունաբերական, գյուղատնտեսական ու առևտրական ձեռնարկությունների և կազմակերպությունների կառավարումը, ինչպես նաև տեղական արդյունաբերության ղեկավարումը.

կ) Միությանը յենթակա ձեռնարկությունների դրության և կառավարման վերահսկողությունն ու հետևելը.

հ) հողից, ընդերքից, անտառներից ու ջրերից օգտվելու կարգի սահմանումը.

ձ) բնակարանային ու կոմունալ տնտեսության, բնակարանային շինարարության և քաղաքների ու մարդաբնակ այլ վայրերի բարեկարգության ղեկավարումը.

ղ) ճանապարհային շինարարությունը, տեղական տրանսպորտի ու կապի ղեկավարումը.

ճ) աշխատանքի օրենսդրությունը.

մ) առողջապահության գործի ղեկավարումը.

յ) սոցիալական ապահովության գործի ղեկավարումը.

ն) տարրական, միջնակարգ և բարձրագույն կրթության գործի ղեկավարումը.

շ) Ադրբեջանյան ԽՍՀ-ի կուլտուր-լուսավորական և գիտական կազմակերպությունների ու հիմնարկությունների ղեկավարումը և ընդհանուր հանրապետական նշանակություն ունեցող կուլտուր-լուսավորական ու գիտական կազմակերպությունների և հիմնարկությունների կառավարումը.

ո) Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի գործի ղեկավարումն ու կազմակերպումը.

չ) Ադրբեջանյան ԽՍՀ-ի դատական մարմինների կազմակերպումը.

պ) Ադրբեջանյան ԽՍՀ-ի քաղաքացիության իրավունքներ տալը.

ջ) Ադրբեջանյան ԽՍՀ-ի դատական մարմինների կողմից դատապարտված քաղաքացիների ամնիստիան ու ներումը:

ՀՈԴՎԱԾ 20. Նախիջևանի ԱԽՍՀ-ն ունի իր Սահմանադրությունը, որը հաշվի յե առնում Նախիջևանի ԱԽՍՀ-ի առանձնահատկությունները և կառուցված է Ադրբեջանյան ԽՍՀ-ի Սահմանադրության ու ԽՍՀՄ-ի Սահմանադրությանը լիովին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 21. Ադրբեջանյան ԽՍՀ-ի օրենքները պարտադիր են Նախիջևանի ԱԽՍՀ-ի տերիտորիայում: Նախիջևանի ԱԽՍՀ-ի օրենքի և Ադրբեջանյան ԽՍՀ-ի օրենքի միջև տարամիտություն լինելու դեպքում գործում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի օրենքը:



## ԳԼՈՒԽ III

# ԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 22. Ադրբեջանյան ԽՍՀ-ի պետական իշխանության բարձրագույն մարմինը հանդիսանում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդը:

ՀՈԴՎԱԾ 23. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդն իրագործում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի Սահմանադրության 13 և 19 հոդվածների համաձայն Ադրբեջանյան ԽՍՀ-ին վերապահված բոլոր իրավունքները, որ չափով որ նրանք, համաձայն Սահմանադրության, չեն մտնում Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդին հաշվետու Ադրբեջանյան ԽՍՀ-ի մարմինների — Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության, Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարիատների իրավասության մեջ:

1010
42489

ՀՈԴՎԱԾ 24. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդը հանդիսանում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի միակ օրենսդրական մարմինը:

ՀՈԴՎԱԾ 25. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդն ընտրում են Ադրբեջանյան ԽՍՀ-ի քաղաքացիներն ըստ ընտրական շրջանների 4 տարվա ժամկետով, 10 հազար բնակչից մի պատգամավորի նորմայով:

ՀՈԴՎԱԾ 26. Օրենքը հաստատված է համարվում, յեթե նա ընդունված է Ադրբեջանյան ԽՍՀ-ի

Գերագույն Խորհրդի կողմից ձայների հասարակ մեծամասնությամբ։

ՀՈԴՎԱԾ 27. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի ընդունած օրենքները հրապարակվում են Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահի և քարտուղարի ստորագրություններով։

ՀՈԴՎԱԾ 28. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդն ընտրում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի նախագահ և նրա յերկու տեղակալներ։

ՀՈԴՎԱԾ 29. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի նախագահը ղեկավարում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի նիստերը և տնօրինում է նրա ներքին կարգը։

ՀՈԴՎԱԾ 30. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի նստաշրջանները հրավիրում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահությունը տարեկան յերկու անգամ։

Հերթից դուրս նստաշրջանները հրավիրում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահությունն իր հայեցողությամբ, կամ Գերագույն Խորհրդի պատգամավորների մեկ-յերրորդի պահանջով։

ՀՈԴՎԱԾ 31. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդն ընտրում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահություն՝ բաղկացած Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահից, նրա յերկու տեղակալներից՝ Ավտոնոմ հանրապետությունների ու մարզերի թվի համաձայն, Նախագահության քարտուղարից և Նախագահության 13 անդամից։



ՀՈԴՎԱԾ 32. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահությունը հաշվետու յե Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի առաջ իր ամբողջ գործունեության համար։

ՀՈԴՎԱԾ 33. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահությունը՝

ա) հրավիրում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի նստաշրջանները.

բ) մեկնաբանում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի օրենքները, հրատարակում է հրամանագրեր.

գ) կատարում է համաժողովրդական հարցում (ռեֆերենդում).

դ) բեկանում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի, Նախիջևանի ԱԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումներն ու կարգադրությունները, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի .վորոշումներն ու կարգադրությունները՝ դրանք օրենքին անհամապատասխան լինելու դեպքում.

ե) Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում պաշտոնից ազատում և նշանակում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի առանձին Ժողովրդական Կոմիսարներին՝ Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի առաջադրությամբ, հետագայում ներկայացնելով Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդին ի հաստատություն.

զ) տալիս է Ադրբեջանյան ԽՍՀ-ի պատվավոր կոչումներ.

ը) իրագործում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի դատական մարմինների կողմից դատապարտված քաղաքացիներին ներում շնորհելու իրավունքը:

ՀՈԴՎԱԾ 34. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդն ընտրում է մանդատային հանձնաժողով, վորն ստուգում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի պատգամավորների լիազորությունները:

Մանդատային հանձնաժողովի առաջարկությամբ Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդը վորոշում է կա՛մ ընդունել առանձին պատգամավորների լիազորությունները, կա՛մ բեկանել նրանց ընտրությունները:

ՀՈԴՎԱԾ 35. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդը, յերբ անհրաժեշտ գտնի, նշանակում է քննիչ ու վերստուգիչ հանձնաժողովներ ամեն մի հարցի առթիվ:

Բոլոր հիմնարկություններն ու պաշտոնատար անձերը պարտավոր են կատարել այդ հանձնաժողովների պահանջները և նրանց ներկայացնել անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր:

ՀՈԴՎԱԾ 36. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի պատգամավորը չի կարող դատական պատասխանատվության կանչվել կամ ձերբակալվել առանց Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի համաձայնության, իսկ Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում, — առանց Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության համաձայնության:



ՀՈԴՎԱԾ 37. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի լիազորությունները լրանալուց հետո Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահությունը պահպանում է իր լիազորությունները մինչև Ադրբեջանյան ԽՍՀ-ի նորընտիր Գերագույն Խորհրդի կողմից Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի նոր Նախագահություն կազմելը:

ՀՈԴՎԱԾ 38. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի լիազորությունները լրանալուց հետո Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահությունը նշանակում է նոր ընտրություններ Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի լիազորությունները լրանալու որից վոչ ավելի, քան յերկու ամսվա ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 39. Ադրբեջանյան ԽՍՀ-ի նորընտիր Գերագույն Խորհուրդը հրավիրվում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի նախկին գումարման Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից՝ վոչ ուշ, քան ընտրություններից մի ամիս հետո:

ՀՈԴՎԱԾ 40. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդը կազմում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի կառավարություն—Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ:

ՀՈԴՎԱԾ 41. Որենքները, ինչպես նաև Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագրերն ու բացատրությունները, Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումներն ու կարգադրությունները հրապարակվում են ադրբեջաներեն, ռուսերեն և հայերեն լեզուներով:

ԳԼՈՒԽ IV

# ԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

*ՀՈԴՎԱԾ 42· Ադրբեջանյան ԽՍՀ-ի պետական իշխանության բարձրագույն գործադիր և կարգադրիչ մարմինը հանդիսանում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը։*

*ՀՈԴՎԱԾ 43· Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը պատասխանատու է Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի առջև և հաշվետու է նրան, իսկ Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում՝ Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության առջև, վորին հաշվետու է։*

*ՀՈԴՎԱԾ 44· Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ԽՍՀՄ-ի և Ադրբեջանյան ԽՍՀ-ի որենքների, ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումների ու կարգադրությունների հիման վրա և ի կատարումն նրանց հրատարակում է վորոշումներ ու կարգադրություններ և ստուգում է նրանց կատարումը։*

*ՀՈԴՎԱԾ 45· Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումների ու կարգադրությունների կատարումը պարտադիր է Ադրբեջանյան ԽՍՀ-ի ամբողջ տերրիտորիայում։*

*ՀՈԴՎԱԾ 46· Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը՝*



*ա) միավորում և ուղղություն է տալիս Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարիատների և նրա գերատեսչությանը յենթակա տնտեսական ու կուլտուրական մյուս հիմնարկությունների աշխատանքին. միավորում ու ստուգում է ընդհանուր-միութենական Ժողովրդական Կոմիսարիատների լիազորների աշխատանքը.*

*բ) միջոցներ է ձեռք առնում ժողովրդատնտեսական պլանն իրագործելու համար.*

*գ) միջոցներ է ձեռք առնում Ադրբեջանյան ԽՍՀ-ի պետական ու տեղական բյուջեն իրագործելու համար.*

*դ) միջոցներ է ձեռք առնում հասարակական կարգն ապահովելու, պետության շահերը պաշտպանելու և քաղաքացիների իրավունքները պահպանելու համար.*

*ե) ուղղություն է տալիս և ստուգում Նախիջևանի ԱԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի աշխատանքը, ղեկավարում և ստուգում է Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի, աշխատավորների պատգամավորների շրջանային և քաղաքային Խորհուրդների գործադիր կոմիտեների աշխատանքը.*

*զ) անհրաժեշտ դեպքում կազմում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին կից տնտեսական և կուլտուրական շինարարության գործերի հատուկ կոմիտեներ ու Գլխավոր Վարչություններ։*

*ՀՈԴՎԱԾ 47· Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն իրավունք ունի բեկանել Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի, աշխատավորների պատգամավորների շրջանային և քաղաքային*

Խորհուրդների գործադիր կոմիտեների վորոշումներն ու կարգադրությունները և կասեցնել Նախիջևանի ԱԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումներն ու կարգադրությունները և Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի, աշխատավորների պատգամավորների շրջանային և քաղաքային Խորհուրդների վորոշումներն ու կարգադրությունները:

Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն իրավունք ունի բեկանել Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների հրամաններն ու հրահանգները:

ՀՈԴՎԱԾ 48. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը կազմվում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի կողմից հետևյալ կազմով՝

Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ.

Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալներ.

Ադրբեջանյան ԽՍՀ-ի Պետական պլանային հանձնաժողովի նախագահ.

Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարներ՝

Սննդի արդյունաբերության.
Թեթև արդյունաբերության.
Անտառային արդյունաբերության.
Հողագործության.
Ֆինանսների.
Ներքին առևտրի.
Ներքին գործերի.
Արդարադատության.
Առողջապահության.



Լուսավորության.
Տեղական արդյունաբերության.
Կոմունալ տնտեսության.
Սոցիալական ապահովության.

ԽՍՀՄ-ի Մթերումների կոմիտեյի լիազոր.

Արվեստների գործերի Վարչության պետ.

Ընդհանուր-միութենական Ժողովրդական Կոմիսարիատների լիազորներ:

ՀՈԴՎԱԾ 49. Ադրբեջանյան ԽՍՀ-ի կառավարությունը կամ Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարը, վորոնց ուղղված է Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի պատգամավորի հարցապնդումը, պարտավոր են վոչ ավելի քան յերեք որվա ժամկետում բանավոր կամ գրավոր պատասխան տալ Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդում:

ՀՈԴՎԱԾ 50. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարները ղեկավարում են պետական կառավարման այն ճյուղերը, վորոնք մտնում են Ադրբեջանյան ԽՍՀ-ի իրավասության մեջ:

ՀՈԴՎԱԾ 51. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարները համապատասխան Ժողովրդական Կոմիսարիատների իրավասության սահմաններում հրատարակում են հրամաններ ու հրահանգներ՝ ԽՍՀՄ-ի և Ադրբեջանյան ԽՍՀ-ի որենքների, ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումների ու կարգադրությունների, ԽՍՀՄ-ի միութենական-հանրապետական Ժողովրդական Կոմիսարիատների հրամանների ու հրահանգների հիման վրա և ի կատարումն նրանց, և ստուգում են նրանց կատարումը:

ՀՈԴՎԱԾ 52. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարիատները լինում են կա՛մ միութենական-հանրապետական, կա՛մ հանրապետական:

ՀՈԴՎԱԾ 53. Ադրբեջանյան ԽՍՀ-ի միութենական-հանրապետական ժողովրդական Կոմիսարիատները ղեկավարում են Ադրբեջանյան ԽՍՀ-ի պետական կառավարման իրենց հանձնարարված ճյուղերը, բացառությամբ միայն սահմանափակ թվով ձեռնարկությունների՝ ըստ ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից հաստատված ցուցակի, յենթարկվելով ինչպես Ադրբեջանյան ԽՍՀ-ի ժողովրդական Կոմիսարների Խորհրդին, նույնպես և ԽՍՀՄ-ի համապատասխան միութենական-հանրապետական ժողովրդական Կոմիսարիատներին։

ՀՈԴՎԱԾ 54. Ադրբեջանյան ԽՍՀ-ի հանրապետական ժողովրդական Կոմիսարիատները ղեկավարում են պետական կառավարման իրենց հանձնարարված ճյուղերը, յենթարկվելով անմիջականորեն Ադրբեջանյան ԽՍՀ-ի ժողովրդական Կոմիսարների Խորհրդին։

ՀՈԴՎԱԾ 55. Ադրբեջանյան ԽՍՀ-ի միութենական-հանրապետական ժողովրդական Կոմիսարիատների թվին են պատկանում Ադրբեջանյան ԽՍՀ-ի հետևյալ ժողովրդական Կոմիսարիատները.

Սննդի արդյունաբերության.
Թեթև արդյունաբերության.
Անտառային արդյունաբերության.
Հողագործության.
Ֆինանսների.
Ներքին առևտրի.
Ներքին գործերի.
Արդարադատության.
Առողջապահության։

ՀՈԴՎԱԾ 56. Հանրապետական ժողովրդական Կոմիսարիատների թվին են պատկանում Ադրբեջանյան ԽՍՀ-ի հետևյալ ժողովրդական Կոմիսարիատները՝



Լուսավորության.
Տեղական արդյունաբերության.
Կոմունալ տնտեսության.
Սոցիալական ապահովության։

## ԳԼՈՒԽ V

## ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԱՎՏՈՆՈՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 57. Նախիջևանի ԱԽՍՀ-ի պետական իշխանության բարձրագույն մարմինը հանդիսանում է Նախիջևանի ԱԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդը։

ՀՈԴՎԱԾ 58. Նախիջևանի ԱԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդն ընտրում են հանրապետության քաղաքացիները 4 տարվա ժամկետով Նախիջևանի ԱԽՍՀ-ի Սահմանադրությամբ սահմանվող ներկայացուցչության նորմաներով։

ՀՈԴՎԱԾ 59. Նախիջևանի ԱԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդը հանդիսանում է Նախիջևանի ԱԽՍՀ-ի միակ օրենսդրական մարմինը։

ՀՈԴՎԱԾ 60. Նախիջևանի ԱԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդը՝

ա) ընդունում է Նախիջևանի ԱԽՍՀ-ի Սահմանադրությունը և ներկայացնում է այն Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի հաստատմանը.

բ) սահմանում է Նախիջևանի ԱԽՍՀ-ի շրջանային բաժանումը և շրջանների ու քաղաքների սահմանն-

րը, և ներկայացնում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի հաստատմանը.

գ) հաստատում է Նախիջևանի ԻԽՍՀ-ի ժողովրդատնտեսական պլանն ու բյուջեն.

դ) տալիս է Նախիջևանի ԻԽՍՀ-ի պատվավոր կոչումներ:

ՀՈԴՎԱԾ 61. Նախիջևանի ԻԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդն ընտրում է Նախիջևանի ԻԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահություն հետևյալ կազմով՝ Նախիջևանի ԻԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահ, նրա տեղակալներ, Նախագահության քարտուղար և Նախիջևանի ԻԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության անդամներ:

ՀՈԴՎԱԾ 62. Նախիջևանի ԻԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահությունը հաշվետու է Նախիջևանի ԻԽՍՀ-ի Գերագույն Խորհրդին:

ՀՈԴՎԱԾ 63. Նախիջևանի ԻԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության լիազորությունները որոշվում են Նախիջևանի ԻԽՍՀ-ի Սահմանադրությամբ:

ՀՈԴՎԱԾ 64. Նիստերը վարելու համար Նախիջևանի ԻԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդն ընտրում է Նախիջևանի ԻԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի նախագահ և նրա տեղակալներ:

ՀՈԴՎԱԾ 65. Նախիջևանի ԻԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդը կազմում է Նախիջևանի ԻԽՍՀ-ի կառավարություն — Նախիջևանի ԻԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ:

ՀՈԴՎԱԾ 66. Նախիջևանի ԻԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի ընդունած օրենքները, Նախիջևանի ԻԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի որոշումներն ու կարգադրությունները հրապարակվում են ադրբեջաներեն և հայերեն լեզուներով:



ԳԼՈՒԽ VI

## ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԱՎՏՈՆՈՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 67. Նախիջևանի ԻԽՍՀ-ի պետական իշխանության բարձրագույն գործադիր և կարգադրիչ մարմինը հանդիսանում է Նախիջևանի ԻԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը:

ՀՈԴՎԱԾ 68. Նախիջևանի ԻԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը պատասխանատու է Նախիջևանի ԻԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի առջև և հաշվետու է նրան, իսկ Նախիջևանի ԻԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում՝ Նախիջևանի ԻԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության առջև, որին հաշվետու է:

ՀՈԴՎԱԾ 69. Նախիջևանի ԻԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ԽՍՀՄ-ի, Ադրբեջանյան ԽՍՀ-ի և Նախիջևանի ԻԽՍՀ-ի օրենքների, ԽՍՀՄ-ի և Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների որոշումների ու կարգադրությունների հիման վրա և ի կատարումն նրանց հրատարակում է որոշումներ ու կարգադրություններ, և ստուգում է նրանց կատարումը:

ՀՈԴՎԱԾ 70. Նախիջևանի ԻԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն իրավունք ունի բեկանել Նախիջևանի ԻԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների հրամաններն ու կարգադրությունները, աշխատավորների պատգամավորների շրջանային ու քաղաքային

Խորհուրդների գործադիր կոմիտեների վորոշումներըն ու կարգադրությունները, ինչպես նաև կասեցնել աշխատավորների պատգամավորների շրջանային ու քաղաքային Խորհուրդների վորոշումներն ու կարգադրությունները:

ՀՈԴՎԱԾ 71․ Նախիջևանի ԱԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը կազմվում է Նախիջևանի ԱԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի կողմից հետևյալ կազմով՝

Նախիջևանի ԱԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ․

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալներ:

Պետական պլանային հանձնաժողովի նախագահ․

Ժողովրդական Կոմիսարներ․

Սննդի արդյունաբերության․

Հողագործության․

Ֆինանսների․

Ներքին առևտրի․

Ներքին գործերի․

Արդարադատության․

Առողջապահության․

Լուսավորության․

Տեղական արդյունաբերության․

Կոմունալ տնտեսության․

Սոցիալական ապահովության․

Ճանապարհային վարչության պետ․

Մթերումների կոմիտեյի լիազոր․

Արվեստների գործերի Վարչության պետ:

ՀՈԴՎԱԾ 72․ Նախիջևանի ԱԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարները ղեկավարում են պետական կառավարման այն ճյուղերը, վորոնք մտնում են Նախիջևանի ԱԽՍՀ-ի իրավասության մեջ, համաձայն



Ադրբեջանյան ԽՍՀ-ի և Նախիջևանի ԱԽՍՀ-ի Սահմանադրությունների:

ՀՈԴՎԱԾ 73․ Նախիջևանի ԱԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարները համապատասխան Ժողովրդական Կոմիսարիատների իրավասության սահմաններում հրատարակում են հրամաններ և հրահանգներ ԽՍՀՄ-ի, Ադրբեջանյան ԽՍՀ-ի և Նախիջևանի ԱԽՍՀ-ի օրենքների, ԽՍՀՄ-ի, Ադրբեջանյան ԽՍՀ-ի և Նախիջևանի ԱԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների վորոշումների ու կարգադրությունների, Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների հրամանների ու հրահանգների հիման վրա և ի կատարումն նրանց:

ՀՈԴՎԱԾ 74․ Նախիջևանի ԱԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարիատները ղեկավարում են պետական կառավարման իրենց հանձնարարված ճյուղերը, յենթարկվելով ինչպես Նախիջևանի ԱԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին, նույնպես և Ադրբեջանյան ԽՍՀ-ի համապատասխան Ժողովրդական Կոմիսարիատներին:

## ԳԼՈՒԽ VII

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՎՏՈՆՈՄ ՄԱՐԶԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 75․ Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի պետական իշխանության մարմինը հանդիսանում է Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների Խորհուրդը:

ՀՈԴՎԱԾ 76․ Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների Խոր-

հուրդն ընտրում են Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի քաղաքացիները յերկու տարվա ժամկետով 1500 բնակչից մի պատգամավորի նորմայով։

ՀՈԴՎԱԾ 77· Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների Խորհուրդը ղեկավարում է կուլտուր-քաղաքական և տնտեսական շինարարությունն իր տերիտորիայում, հաստատում է մարզային բյուջեն և մարզային ժողովրդատնտեսական պլանը, ղեկավարում է իրեն յենթակա կառավարման մարմինների գործունեությունը, ապահովում է պետական կարգի պահպանությունը, աջակցում է յերկրի պաշտպանունակության ուժեղացմանը, ապահովում է որենքների կատարումը և քաղաքացիների իրավունքների պահպանությունը։

ՀՈԴՎԱԾ 78· Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների Խորհուրդը վորոշումներ է ընդունում և կարգադրություններ է անում ԽՍՀՄ-ի և Ադրբեջանյան ԽՍՀ-ի որենքներով նրան վերապահված իրավունքների սահմաններում։

Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի վորոշումներն ու կարգադրությունները հրապարակվում են հայերեն և ադրբեջաներեն լեզուներով։

ՀՈԴՎԱԾ 79· Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի գործադիր և կարգադրիչ մարմինը հանդիսանում է Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի գործադիր կոմիտեն, վորն ընտրվում է Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի կողմից՝ կազմված նախագահից, նախա-



գահի յերկու տեղակալներից, քարտուղարից և 9 անդամից։

ՀՈԴՎԱԾ 80· Պետական կառավարման առանձին ճյուղերը ղեկավարելու համար Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի գործադիր կոմիտեն կազմում է ներքոհիշյալ բաժինները·

հողային·
ֆինանսային·
ներքին առևտրի·
առողջապահության·
ժողովրդական կրթության·
տեղական արդյունաբերության·
կոմունալ տնտեսության·
անտառային տնտեսության·
սոցիալական ապահովության·
ճանապարհային·
ընդհանուր·
արվեստների գործերի·
պլանային հանձնաժողով·
կադրերի սեկտոր գործկոմի նախագահին կից

և, բացի դրանից, Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի գործադիր կոմիտեյին կից կան՝

Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի Վարչություն·

Մթերումների կոմիտեյի լիազոր։

ՀՈԴՎԱԾ 81· Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի բաժիններն ու վարչություններն իրենց գործունեության մեջ յենթարկվում են ինչպես Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդին ու նրա գործադիր Կոմիտե-

յին, այնպես և Ադրբեջանյան ԽՍՀ-ի համապատասխան ժողովրդական կոմիսարիատներին։

ՀՈԴՎԱԾ 82. Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի նստաշրջանները հրավիրում է նրա գործադիր կոմիտեն տարեկան չորս անգամից ոչ պակաս։

ՀՈԴՎԱԾ 83. Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների Խորհուրդն իր նստաշրջանի ժամանակ ընտրում է նախագահ և քարտուղար՝ նստաշրջանի նիստերը վարելու համար։

ՀՈԴՎԱԾ 84. Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի պետական իշխանության շրջանային, քաղաքային և գյուղական մարմինները կազմվում են ներկա Սահմանադրության 8-րդ գլխի հիմունքներով։

ՀՈԴՎԱԾ 85. Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների Խորհուրդն Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի հաստատմանն է ներկայացնում «Կանոնադրություն Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի մասին», որը հաշվի է առնում Ավտոնոմ մարզի ազգային առանձնահատկությունները։

## ԳԼՈՒԽ VIII

## ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 86. Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզում, շրջաններում, քաղաքներում, ավաններում, գյուղերում պետական իշխանության մարմինները հանդիսանում են աշխատավորների պատգամավորների Խորհուրդները։



ՀՈԴՎԱԾ 87. Աշխատավորների պատգամավորների շրջանային, քաղաքային, խոշոր քաղաքներում շրջանային, ավանային և գյուղական Խորհուրդները համապատասխանորեն ընտրում են շրջանի, քաղաքի, գյուղի աշխատավորները յերկու տարվա ժամկետով։

ՀՈԴՎԱԾ 88. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդները (շրջանի, քաղաքի, գյուղի) ղեկավարում են կուլտուր-քաղաքական և տնտեսական շինարարությունն իրենց տերրիտորիայում, սահմանում են տեղական բյուջեն, ղեկավարում են իրենց յենթակա վարչական մարմինների գործունեությունը, ապահովում են պետական կարգի պահպանությունը, աջակցում են յերկրի պաշտպանունակության ուժեղացմանը, ապահովում են օրենքների կատարումը և քաղաքացիների իրավունքների պահպանությունը։

ՀՈԴՎԱԾ 89. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդները վորոշումներ են ընդունում և կարգադրություններ են անում ԽՍՀՄ-ի, Ադրբեջանյան ԽՍՀ-ի օրենքներով, իսկ Նախիջևանի ԱԽՍՀ-ում՝ նաև Ավտոնոմ հանրապետության օրենքներով նրանց վերապահված իրավունքների սահմաններում։

ՀՈԴՎԱԾ 90. Աշխատավորների պատգամավորների շրջանային, քաղաքային և գյուղական Խորհուրդների գործադիր ու կարգադրիչ մարմինները հանդիսանում են նրանց ընտրած գործադիր կոմիտեները՝ բաղկացած նախագահից, նրա տեղակալներից, քարտուղարից և անդամներից։

ՀՈԴՎԱԾ 91. Վոչ մեծ բնակավայրերում աշխատավորների պատգամավորների գյուղական Խորհուրդների գործադիր ու կարգադրիչ մարմինները հանդիսանում են նրանց ընտրած նախագահը, նրա տեղակալը և քարտուղարը։

ՀՈԴՎԱԾ 92․ Աշխատավորների պատգամավորների Խորհուրդների (շրջանի, քաղաքի, ավանի, գյուղի) գործադիր կոմիտեներն իրագործում են կուլտուր – քաղաքական և տնտեսական շինարարության ղեկավարությունն իրենց տերրիտորիայում՝ աշխատավորների պատգամավորների համապատասխան Խորհուրդների և վերադաս պետական մարմինների վորոշումների հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 93․ Աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհուրդների նստաշրջանները հրավիրում են նրանց գործադիր կոմիտեները տարեկան վոչ պակաս քան 6 անգամ:

ՀՈԴՎԱԾ 94․ Աշխատավորների պատգամավորների քաղաքային և գյուղական Խորհուրդների նստաշըրջանները հրավիրում են նրանց գործադիր մարմինները վոչ պակաս քան ամսական մեկ անգամ:

ՀՈԴՎԱԾ 95․ Աշխատավորների պատգամավորների շրջանային և քաղաքային Խորհուրդներն իրենց նստաշրջանի ժամանակ ընտրում են նախագահ ու քարտուղար՝ նստաշրջանի նիստերը վարելու համար:

ՀՈԴՎԱԾ 96․ Գյուղական Խորհրդի նախագահը հրավիրում է գյուղական Խորհուրդը և վարում նրա նիստերը:

ՀՈԴՎԱԾ 97․ Աշխատավորների պատգամավորների Խորհուրդների գործադիր մարմիններն անմիջականորեն հաշվետու յեն ինչպես իրենց ընտրող աշխատավորների պատգամավորների Խորհրդին, նույնպես և աշխատավորների պատգամավորների վերադաս Խորհրդի գործադիր մարմնին:

ՀՈԴՎԱԾ 98․ Աշխատավորների պատգամավորների Խորհուրդների վերադաս գործադիր կոմիտեներն իրավունք ունեն բեկանել ստորադաս գործադիր կոմիտեների վորոշումներն ու կարգադրությունները և



կասեցնել աշխատավորների պատգամավորների ստորադաս Խորհուրդների վորոշումներն ու կարգադրությունները:

ՀՈԴՎԱԾ 99․ Աշխատավորների պատգամավորների վերադաս Խորհուրդներն իրավունք ունեն բեկանել աշխատավորների պատգամավորների ստորադաս Խորհուրդների ու նրանց գործադիր կոմիտեների վորոշումներն ու կարգադրությունները:

ՀՈԴՎԱԾ 100․ Աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհուրդները կազմում են գործադիր կոմիտեների հետևյալ բաժինները․

հողային․
ժողովրդական կրթության․
ֆինանսային․
ներքին առևտրի․
առողջապահության․
սոցիալական ապահովության․
ընդհանուր․
ճանապարհային․
պլանային հանձնաժողով․
կադրերի սեկտոր գործկոմի նախագահին կից

և, բացի դրանից, շրջանի տնտեսության առանձնահատկություններին համապատասխան, Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության հաստատումով, աշխատավորների պատգամավորների շըրջանային Խորհուրդները կազմում են կոմունալ ու տեղական արդյունաբերության բաժիններ:

ՀՈԴՎԱԾ 101․ Շրջանի պայմաններին համապատասխան, ԽՍՀՄ-ի և Ադրբեջանյան ԽՍՀ-ի օրենքների հիման վրա, Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության հաստատումով, Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատ աշխատավոր-

ների պատգամավորների շրջանային Խորհուրդներին կից կազմում է իր վարչությունները։

ՀՈԴՎԱԾ 102․ Աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհուրդների բաժինները իրենց գործունեության մեջ ենթարկվում են ինչպես աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհրդին ու նրա գործադիր կոմիտեին, այնպես և Ադրբեջանյան ԽՍՀ-ի համապատասխան ժողովրդական Կոմիսարիատին, իսկ Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզում—աշխատավորների պատգամավորների մարզային Խորհրդի համապատասխան բաժնին։

ՀՈԴՎԱԾ 103․ Աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդները կազմում են գործադիր կոմիտեների հետևյալ բաժինները․

ֆինանսային․

կոմունալ տնտեսության․

ներքին առևտրի․

առողջապահության․

ժողովրդական կրթության․

սոցիալական ապահովության․

ընդհանուր․

պլանային հանձնաժողով․

կադրերի սեկտոր գործկոմի նախագահին կից

և, բացի դրանից, քաղաքի արդյունաբերության, նրա քաղաքային և քաղաքամերձ տնտեսության առանձնահատկություններին համապատասխան՝

տեղական արդյունաբերության․

հողային։

ՀՈԴՎԱԾ 104․ Աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդների բաժիններն իրենց գործունեության մեջ ենթարկվում են ինչպես աշխատավորների պատգամավորների համապատասխան քաղաքային Խորհրդին ու նրա գործադիր կոմիտեին,



այնպես և աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհրդի համապատասխան բաժնին։

ՀՈԴՎԱԾ 105․ Բաքվի աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհրդի բաժիններն իրենց գործունեության մեջ ենթարկվում են ինչպես Բաքվի աշխատավորների պատգամավորների Խորհրդին ու նրա գործադիր կոմիտեին, այնպես և Ադրբեջանյան ԽՍՀ-ի համապատասխան ժողովրդական Կոմիսարիատին անմիջականորեն։

## ԳԼՈՒԽ IX

## ԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ

ՀՈԴՎԱԾ 106․ Ադրբեջանյան ԽՍՀ-ի պետական բյուջեն կազմում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և ներկայացնում Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի հաստատմանը։

Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի կողմից հաստատված Ադրբեջանյան ԽՍՀ-ի պետական բյուջեն հրապարակվում է ի գիտություն ընդհանուրի։

ՀՈԴՎԱԾ 107․ Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդն ընտրում է բյուջետային հանձնաժողով, որը Գերագույն Խորհրդին զեկուցում է իր եզրակացությունն Ադրբեջանյան ԽՍՀ-ի պետական բյուջեի վերաբերյալ։

ՀՈԴՎԱԾ 108․ Ադրբեջանյան ԽՍՀ-ի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունը հաս-

տատվում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի կողմից և հրապարակվում է ի գիտություն ընդհանուրի:

ՀՈԴՎԱԾ 109. Նախիջևանի ԱԽՍՀ-ի բյուջեի, նույնպես և Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի, շրջանային, քաղաքային և գյուղական Խորհուրդների բյուջեների մեջ ներառվում են տեղական տնտեսությունից ստացվող յեկամուտները, նրանց տերրիտորիայում ստացվող պետական յեկամուտներից արվող հատկացումները, ինչպես և ստացումները տեղական հարկերից ու գանձումներից՝ ԽՍՀՄ-ի և Ադրբեջանյան ԽՍՀ-ի օրենսդրությամբ սահմանվող չափերով:

## ԳԼՈՒԽ X

## ԴԱՏԱՐԱՆ ՅԵՎ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ 110. Արդարադատությունն Ադրբեջանյան ԽՍՀ-ում իրագործվում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Դատարանի, Նախիջևանի ԱԽՍՀ-ի Գերագույն Դատարանի, Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի մարզային դատարանի, ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի վորոշմամբ ստեղծվող՝ ԽՍՀՄ-ի հատուկ դատարանների, ժողովրդական դատարանների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 111. Գործերի քննարկումը բոլոր դատարաններում կատարվում է ժողովրդական ատենակալների մասնակցությամբ, բացի օրենքով հատկապես նախատեսված դեպքերից:

ՀՈԴՎԱԾ 112. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Դատարանն Ադրբեջանյան ԽՍՀ-ի բարձրագույն դատական մարմինն է հանդիսանում: Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Դատարանի վրա դրվում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի, Նախիջևանի ԱԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի բոլոր դատական մարմինների դատական գործունեության հսկողությունը:



ՀՈԴՎԱԾ 113. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Դատարանն ընտրվում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի կողմից 5 տարվա ժամկետով:

ՀՈԴՎԱԾ 114. Նախիջևանի ԱԽՍՀ-ի Գերագույն Դատարանն ընտրվում է Նախիջևանի ԱԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի կողմից 5 տարվա ժամկետով:

ՀՈԴՎԱԾ 115. Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի մարզային դատարանն ընտրվում է Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի կողմից 5 տարվա ժամկետով:

ՀՈԴՎԱԾ 116. Ժողովրդական դատարաններն ընտրվում են շրջանի քաղաքացիների՝ ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ՝ յերեք տարվա ժամկետով:

ՀՈԴՎԱԾ 117. Դատավարությունն Ադրբեջանյան ԽՍՀ-ում և Նախիջևանի ԱԽՍՀ-ում տարվում է ադրբեջաներեն լեզվով, Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզում՝ հայերեն լեզվով, իսկ այն շրջաններում, վորտեղ ազգաբնակության մեծամասնությունն են կազմում հայերը, կամ ռուսները, կամ թալիշները՝ համապատասխանորեն հայերեն կամ ռուսերեն, կամ թալիշերեն լեզվով, այդ լեզուներին չտիրապետող անձերի համար ապահովելով լիակատար ծանոթացումը գործի նյութերին թարգմանի միջոցով, ինչպես նաև դատարանում մայրենի լեզվով հանդես գալու իրավունքը:

ՀՈԴՎԱԾ 118. Գործերի քննությունն Ադրբեջանյան ԽՍՀ-ի բոլոր դատարաններում, յեթե օրենքը բացառություններ չի նախատեսում, տարվում ե դռնբաց, ապահովելով մեղադրյալի համար պաշտպանության իրավունքը:

ՀՈԴՎԱԾ 119. Դատավորներն անկախ են և միայն օրենքին են յենթարկվում:

ՀՈԴՎԱԾ 120. Բոլոր ժողովրդական կոմիսարիատների և նրանց գերատեսչությանը յենթակա հիմնարկությունների, ինչպես առանձին պաշտոնատար անձերի, նույնպես և Ադրբեջանյան ԽՍՀ-ի տերրիտորիայում քաղաքացիների կողմից օրենքների ճշգրիտ կերպով կատարելու բարձրագույն հսկողությունն իրագործվում ե ինչպես անմիջականորեն ԽՍՀՄ-ի Դատախազության կողմից, այնպես և Ադրբեջանյան ԽՍՀ-ի Դատախազի միջոցով:

ՀՈԴՎԱԾ 121. Ադրբեջանյան ԽՍՀ-ի Դատախազը նշանակվում ե ԽՍՀՄ-ի Դատախազի կողմից 5 տարվա ժամկետով:

ՀՈԴՎԱԾ 122. Նախիջևանի ԱԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի դատախազները նշանակվում են ԽՍՀՄ-ի Դատախազի կողմից 5 տարվա ժամկետով:

ՀՈԴՎԱԾ 123. Շրջանային և քաղաքային դատախազները նշանակվում են Ադրբեջանյան ԽՍՀ-ի Դատախազի կողմից ԽՍՀՄ-ի Դատախազի հաստատությամբ՝ 5 տարվա ժամկետով:

ՀՈԴՎԱԾ 124. Դատախազության մարմիններն իրենց ֆունկցիաներն իրագործում են անկախ տեղական վորևե մարմնից, յենթարկվելով միայն ԽՍՀՄ-ի Դատախազին:



## ԳԼՈՒԽ XI

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 125. Ադրբեջանյան ԽՍՀ-ի քաղաքացիներն ունեն աշխատանքի իրավունք, այսինքն՝ ապահովված աշխատանք ստանալու իրավունք, նրանց աշխատանքը վարձատրելով նրա քանակի ու վորակի համապատասխան:

Աշխատանքի իրավունքն ապահովվում ե ժողովրդական տնտեսության սոցիալիստական կազմակերպումով, խորհրդային հասարակության արտադրողական ուժերի անշեղ աճումով, տնտեսական ճգնաժամերի հնարավորության վերացումով և գործազրկության լիկվիդացիայով:

ՀՈԴՎԱԾ 126. Ադրբեջանյան ԽՍՀ-ի քաղաքացիներն ունեն հանգստի իրավունք:

Հանգստի իրավունքն ապահովվում ե բանվորների ճնշող մեծամասնության համար աշխատանքային օրը կրճատելով — հասցնելով 7 ժամի, բանվորների ու ծառայողների համար սահմանելով տարեկան արձակուրդներ՝ պահպանելով աշխատավարձը, աշխատավորներին սպասարկելու համար սանատորիաների, հանգստյան տների, ակումբների լայն ցանց տրամադրելով:

ՀՈԴՎԱԾ 127. Ադրբեջանյան ԽՍՀ-ի քաղաքացիները նյութական ապահովության իրավունք ունեն ծերության, ինչպես նաև հիվանդության և աշխատունակությունը կորցնելու դեպքում:

Այդ իրավունքն ապահովվում է բանվորների ու ծառայողների՝ պետության հաշվին կատարվող սոցիալական ապահովագրության լայն ծավալումով, աշխատավորներին ձրի բժշկական օգնություն ցույց տալով, աշխատավորների օգտագործման համար կուրորտների լայն ցանց տրամադրելով:

ՀՈԴՎԱԾ 128. Ադրբեջանյան ԽՍՀ-ի քաղաքացիներն ունեն կրթության իրավունք:

Այդ իրավունքն ապահովվում է ընդհանուր-պարտադիր տարրական կրթությամբ, կրթության անվճարությամբ, ներառյալ բարձրագույն կրթությունը, բարձրագույն դպրոցում սովորողների ճնշող մեծամասնության համար պետական թոշակների սիստեմով, դպրոցներում մայրենի լեզվով ուսուցանելով, գործարաններում, խորհտնտեսություններում, մեքենա-տրակտորային կայաններում ու կոլտնտեսություններում աշխատավորների համար ձրի արտադրական, տեխնիկական ու ագրոնոմիական ուսուցում կազմակերպելով:

ՀՈԴՎԱԾ 129. Կնոջն Ադրբեջանյան ԽՍՀ-ում տղամարդուն հավասար իրավունքներ են տրվում տնտեսական, պետական, կուլտուրական և հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ասպարեզներում:

Կանանց այդ իրավունքների իրագործման հնարավորությունն ապահովվում է՝ կնոջը տղամարդուն հավասար իրավունք տալով աշխատանքի, աշխատանքի վարձատրության, հանգստի, սոցիալական ապահովագրության ու կրթության ասպարեզում, մոր և մանկան շահերի պետական պահպանությամբ, կնոջը հղիության ժամանակ արձակուրդ տալով՝ պահպանելով աշխատավարձը, ծննդատների, մանկական մսուրների ու պարտեզների լայն ցանցով:



ՀՈԴՎԱԾ 130. Ադրբեջանյան ԽՍՀ-ի քաղաքացիների իրավահավասարությունը, անկախ նրանց ազգությունից ու ռասայից, տնտեսական, պետական, կուլտուրական և հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ասպարեզներում՝ անխախտ օրենք է հանդիսանում:

Իրավունքների որևէ ուղղակի կամ անուղղակի սահմանափակումը, կամ ընդհակառակը, ռասայական ու ազգային պատկանելիությունից ելնելով՝ քաղաքացիների համար ուղղակի կամ անուղղակի առավելություններ սահմանելը, ինչպես նաև ռասայական կամ ազգային բացառիկության, կամ ատելության ու արհամարհանքի ամեն մի քարոզ—պատժվում են օրենքով:

ՀՈԴՎԱԾ 131. Քաղաքացիների համար խղճի ազատություն ապահովելու նպատակով եկեղեցին Ադրբեջանյան ԽՍՀ-ում բաժանված է պետությունից և դպրոցը՝ եկեղեցուց: Կրոնական պաշտամունքների կատարման ազատությունը և հակակրոնական պրոպագանդայի ազատությունը ճանաչվում է բոլոր քաղաքացիների վերաբերմամբ:

ՀՈԴՎԱԾ 132. Աշխատավորների շահերին համապատասխան և սոցիալիստական հասարակակարգն ամրացնելու նպատակով Ադրբեջանյան ԽՍՀ-ի քաղաքացիների համար օրենքով ապահովվում է՝

ա) խոսքի ազատություն,

բ) մամուլի ազատություն,

գ) ժողովների ու միտինգների ազատություն,

դ) փողոցային երթերի ու ցույցերի ազատություն:

Քաղաքացիների այդ իրավունքներն ապահովվում են՝ աշխատավորներին և նրանց կազմակերպություն-

ներին տրամադրելով տպարաններ, թղթի պաշարներ, հասարակական շենքեր, փողոցներ, կապի միջոցներ ու նյութական այլ պայմաններ, վորոնք անհրաժեշտ են դրանց իրագործման համար:

ՀՈԴՎԱԾ 133. Աշխատավորների շահերին համապատասխան և ժողովրդական մասսաների կազմակերպչական ինքնագործունեությունն ու քաղաքական ակտիվությունը զարգացնելու նպատակով ապահովվում է Ադրբեջանյան ԽՍՀ-ի քաղաքացիների իրավունքը՝ միավորվելու հասարակական կազմակերպություններում՝ արհեստակցական միություններում, կոոպերատիվ միավորումներում, յերիտասարդության կազմակերպություններում, սպորտային և պաշտպանական կազմակերպություններում, կուլտուրական, տեխնիկական և գիտական ընկերություններում, իսկ բանվոր դասակարգի շարքերից ու աշխատավորների մյուս խավերից ամենից ավելի ակտիվ ու գիտակից քաղաքացիները համախմբվում են Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության մեջ, վորն աշխատավորների առաջավոր ջոկատն է՝ սոցիալիստական հասարակակարգն ամրացնելու և զարգացնելու համար նրանց մղած պայքարում ու աշխատավորների բոլոր, ինչպես հասարակական, այնպես և պետական կազմակերպությունների ղեկավար կորիզն է ներկայացնում:

ՀՈԴՎԱԾ 134. Ադրբեջանյան ԽՍՀ-ի քաղաքացիների համար ապահովվում է անձի անձեռնմխելիություն: Վոչ վոք չի կարող յենթարկվել ձերբակալության այլ կերպ, քան դատարանի վորոշումով կամ դատախազի սանկցիայով:

ՀՈԴՎԱԾ 135. Քաղաքացիների բնակարանի անձեռնմխելիությունը և նամակագրության գաղտնիությունը պահպանվում է որենքով:



ՀՈԴՎԱԾ 136. Ադրբեջանյան ԽՍՀ-ն ապաստանի իրավունք է վերապահում ոտարերկրյա քաղաքացիներին, վորոնք հետապնդվում են աշխատավորների շահերը պաշտպանելու, կամ գիտական գործունեության, կամ ազգային-ազատագրական պայքարի համար:

ՀՈԴՎԱԾ 137. Ադրբեջանյան ԽՍՀ-ի յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է պահպանել Ադրբեջանյան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրությունը, կատարել որենքները, պահպանել աշխատանքի կարգապահությունը, ազնվորեն վերաբերվել դեպի հասարակական պարտքը, հարգել սոցիալիստական համակեցության կանոնները:

ՀՈԴՎԱԾ 138. Ադրբեջանյան ԽՍՀ-ի յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է պահպանել ու ամրացնել հանրային, սոցիալիստական սեփականությունը, վորպես խորհրդային կարգերի սրբազան և անձեռնմխելի հիմք, վորպես հայրենիքի հարստության ու հզորության աղբյուր, վորպես բոլոր աշխատավորների ունևոր և կուլտուրական կյանքի աղբյուր:

Հանրային, սոցիալիստական սեփականության դեմ վոտնձգություն անող անձերը ժողովրդի թշնամիներ են:

ՀՈԴՎԱԾ 139. Ընդհանուր զինվորական պարտականությունն որենք է հանդիսանում:

Զինվորական ծառայությունը Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակում Ադրբեջանյան ԽՍՀ-ի քաղաքացիների պատվավոր պարտականությունն է:

ՀՈԴՎԱԾ 140. Հայրենիքի պաշտպանությունն Ադրբեջանյան ԽՍՀ-ի յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է: Հայրենիքին դավաճանելը՝ յեր-

դումը խախտելը, թշնամու կողմն անցնելը, պետության ռազմական հզորությանը վնաս հասցնելը, լրտեսությունը—պատժվում են օրենքի ամբողջ խստությամբ, որպես ամենածանր չարագործություն:

ԳԼՈՒԽ XII

## ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

ՀՈԴՎԱԾ 141. Աշխատավորների պատգամավորների բոլոր Խորհուրդների — Ադրբեջանական ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի, Նախիջևանի ԱԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի, Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի, աշխատավորների պատգամավորների շրջանային, քաղաքային և գյուղական Խորհուրդների,—պատգամավորների ընտրությունները կատարվում են ընտրողների ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ:

ՀՈԴՎԱԾ 142. Պատգամավորների ընտրությունները ընդհանուր են. Ադրբեջանական ԽՍՀ-ի բոլոր քաղաքացիները, որոնց 18 տարին լրացել է, անկախ ռասսայական ու ազգային պատկանելությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեությունից, իրավունք ունեն մասնակցելու պատգամավորների ընտրություններին և ընտրվելու, բացառությամբ խելագարների և այն անձերի, որոնք դատարանի կողմից դատապարտված են՝ ընտրական իրավունքների զրկմամբ:

ՀՈԴՎԱԾ 143. Պատգամավորների ընտրությունները հավասար են. յուրաքանչյուր քաղաքացի ունի



մեկ ձայն. բոլոր քաղաքացիներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով:

ՀՈԴՎԱԾ 144. Կանայք ընտրելու և ընտրվելու իրավունքից օգտվում են տղամարդկանց հետ համահավասար:

ՀՈԴՎԱԾ 145. Կարմիր բանակի շարքերում գտնվող քաղաքացիներն ընտրելու և ընտրվելու իրավունքից օգտվում են բոլոր քաղաքացիների հետ համահավասար:

ՀՈԴՎԱԾ 146. Պատգամավորների ընտրությունները ուղղակի յեն. աշխատավորների պատգամավորների բոլոր Խորհուրդների ընտրությունները, սկսած աշխատավորների պատգամավորների գյուղական և քաղաքային Խորհրդից մինչև Ադրբեջանական ԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդը, քաղաքացիները կատարում են անմիջականորեն ուղղակի ընտրությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 147. Պատգամավորների ընտրությունների ժամանակ քվեարկությունը գաղտնի յե:

ՀՈԴՎԱԾ 148. Ադրբեջանական ԽՍՀ-ի աշխատավորների պատգամավորների Խորհուրդների ընտրությունները կատարվում են ըստ ընտրական շրջանների հետևյալ նորմաներով.

Շրջանային Խորհրդինը, յելնելով շրջանի չափից,—ոչ պակաս քան 300 և ոչ ավելի քան 1000 բնակչից մի պատգամավոր.

Քաղաքային Խորհրդինը և քաղաքներում շրջանային Խորհրդինը, յելնելով քաղաքի կամ քաղաքային շրջանի չափից, — ոչ պակաս քան 100 և ոչ ավելի քան 750 բնակչից մի պատգամավոր.

Բաքվի քաղաքային Խորհրդինը—1000 բնակչից մի պատգամավոր.

գյուղական Խորհրդինը, չհնելով գյուղական Խորհրդի գործունեության շրջանի չափից, — ոչ պակաս քան 25 և ոչ ավելի քան 150 բնակչից մի պատգամավոր:

Աշխատավորների պատգամավորների յուրաքանչյուր շրջանային ու քաղաքային Խորհրդի համար և աշխատավորների պատգամավորների գյուղական Խորհուրդների համար ընտրական նորմաները սահմանվում են «Ադրբեջանական ԽՍՀ-ի աշխատավորների պատգամավորների Խորհուրդների ընտրությունների կանոնադրությամբ» ներկա հոդվածով նշված ընտրական նորմաների սահմաններում:

Ընտրական նորմաները Նախիջևանի ԱԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների գյուղական Խորհուրդների համար սահմանվում են համապատասխանորեն Նախիջևանի ԱԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի աշխատավորների պատգամավորների մարզային Խորհրդի կողմից՝ ներկա հոդվածում նշված ընտրական նորմաների սահմաններում:

ՀՈԴՎԱԾ 149. Ընտրությունների ժամանակ թեկնածուներն առաջադրվում են ըստ ընտրական շրջանների:

Թեկնածուներ առաջադրելու իրավունքն ապահովվում է աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների — կոմունիստական կուսակցական կազմակերպությունների, արհեստակցական միությունների, կոոպերատիվների, երիտասարդության կազմակերպությունների, կուլտուրական ընկերությունների համար:



ՀՈԴՎԱԾ 150. Յուրաքանչյուր պատգամավոր պարտավոր է ընտրողների առջև հաշիվ տալ իր աշխատանքի և աշխատավորների պատգամավորների Խորհրդի աշխատանքի մասին ու կարող է ամեն ժամանակ հետ կանչվել ընտրողների մեծամասնության վորոշումով, օրենքով սահմանված կարգով:

## ԳԼՈՒԽ XIII

# ԳԵՐԲԸ, ԴՐՈՇԱԿԸ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

ՀՈԴՎԱԾ 151. Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության պետական գերբը բաղկացած է մուրճ ու մանգաղից, նավթային բուրգի պատկերումից առջևի պլանում, վոր պատկերված են ծագող արեգակի ֆոնի վրա և շրջանակված ցորենի ու հասկերի պսակով, ադրբեջաներեն և ռուսերեն լեզուներով գրված «Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն» և «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք» մակագրությամբ: Գերբի վերևում կա հնգաթև աստղ:

ՀՈԴՎԱԾ 152. Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության պետական դրոշակը բաղկացած է կարմիր կտորից, վորի ձախ անկյունում, կոթի մոտ վերևը, տեղավորված են վոսկեհուռ մուրճ ու մանգաղ և ադրբեջաներեն լեզվով «AzSSR» մակագրություն:

ՀՈԴՎԱԾ 153. Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մայրաքաղաքը Բաքու քաղաքն է:

ԳԼՈՒԽ XIV

## ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

*ՀՈԴՎԱԾ* 154. *Ադրբեջանյան ԽՍՀ-ի Սահմանադրության փոփոխումը կատարվում է միայն Ադրբեջանյան ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի վորոշումով, ընդունված Գերագույն Խորհրդի ձայների առնվազն յերկու յերրորդի մեծամասնությամբ:*



# ՑԱՆԿ


ԳԼՈՒԽ I.

Հասարակական կառուցվածքը . . էջ 9—12

ԳԼՈՒԽ II.

Պետական կառուցվածքը . . . . 12—16

ԳԼՈՒԽ III.

Ադրբեջանյան խորհրդային Սոցիալիստական Հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինները . . . . . . . 17—21

ԳԼՈՒԽ IV.

Ադրբեջանյան խորհրդային Սոցիալիստական Հանրապետության պետական կառավարման մարմինները 22—27

ԳԼՈՒԽ V.

Նախիջևանի Ավտոնոմ խորհրդային Սոցիալիստական Հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինները . . . . . . 27—28

ԳԼՈՒԽ VI.

Նախիջևանի Ավտոնոմ խորհրդային Սոցիալիստական Հանրապետության պետական կառավարման մարմինները . . . . . . . . . . 29—31

ԳԼՈՒԽ VII.

Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի պետական իշխանության մարմինները . . . . . . . . . 31—34

ԳԼՈՒԽ VIII.
Պետական իշխանության տեղական մարմինները . . . . . . . . . 34—39
ԳԼՈՒԽ IX.
Ադրբեջանյան խորհրդային Սոցիալիստական Հանրապետության բյուջեն . . . . . . . . . . . . 39—40
ԳԼՈՒԽ X.
Դատարան և դատախազություն . 40—42
ԳԼՈՒԽ XI.
Քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականությունները . . . . . . . . . . . 43—48
ԳԼՈՒԽ XII.
Ընտրական սիստեմը . . . . . . 48—51
ԳԼՈՒԽ XIII.
Գերբը, դրոշակը, մայրաքաղաքը . 51
ԳԼՈՒԽ XIV.
Սահմանադրության փոփոխման կարգը 52

Հայերենը խմբագրեց՝ Ա. ԲԱԲԼՈՒՄՅԱՆ
Տեխ. խմբագիր և սրբագրիչ՝ Կ. ԹԱՌԼԱՆՅԱՆ

---

Главлит№ 1232. Азпартнешр № 20. Заказ № 759. Тираж 25.200.
Сдано в набор 27/II-37. Подписано к печати 20/IV-37.
Печатных листов. 1³/₄ формат бумаги 72x105¹/₃₂.

---

Типог. „III Интернационал" Баку, ул. Саратовца-Ефимова, 29

ՀՀ Ազգային գրադարան
NL0208987

34.445

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

658

# КОНСТИТУЦИЯ

(Основной Закон)
Азербайджанской
Советской
Социалистической
Республики

Аэпартнешр Баку 1937